ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2015 թ. N 65-Ն

ք. Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 319 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ  է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին» N 319 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրից հանել «և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի» բառերը.

2) ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետը.

3) ուժը կորցրած ճանաչել որոշմամբ հաստատված N 2 հավելվածը.

4) որոշման N 1 հավելվածի աղյուսակում՝

ա. 2-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | Ազոտի երկօքսիդ | 0.2 | 0.04 | 3 |

»,

բ. 128-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 128.1-ին տող.

«

| | | | | |
|---|---|---|---|---|
| 128.1. | Էթանթիոլ | $5*10^{-5}$ | - | 3 |

»,

գ. 171.1-ին տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 171.2-րդ տող.

«

| | | | | |
|---|---|---|---|---|
| 171.2. | Կալցիումի հիդրօքսիդ (հանգած կիր) | 0.03 | 0.01 | 3 |

»,

դ. 172-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 172.1-ին և 172.2-րդ տողեր.

«

| | | | | |
|---|---|---|---|---|
| 172.1. | Կախված մասնիկներ $PM_{2.5}$ | 0.16 | 0.035 | - |
| 172.2. | Կախված մասնիկներ $PM_{10}$ | 0.3 | 0.06 | - |

»,

ե. 202-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 202.1-ին տող.

«

| | | | | |
|---|---|---|---|---|
| 202.1. | Մեթիլացետիլեն | 3.0 | - | 4 |

»,

զ. 240-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 240.1-ին տող.

«

| | | | | |
|---|---|---|---|---|
| 240.1. | Նատրիումի կարբոնատ (կալցինացված սոդա) | 0.15 | 0.05 | 3 |

»,

է. 243-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 243.1-ին տող.

«

| | | | | |
|---|---|---|---|---|
| 243.1. | Նատրիումի ֆլորիդ | 0.5 | 0.15 | 3 |

»,

ը. 283-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 283.1-ին տող.

«

| | | | | |
|---|---|---|---|---|
| 283.1. | Սկիպիդար | 2 | 1 | 4 |

»,

թ. 326-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 326.1-ին տող.

«

| | | | | |
|---|---|---|---|---|
| 326.1. | 2,4,6- տրիամին-1,3,5-տրիազին | 0.02 | 0.01 | 2 |

»,

ժ. 350-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 350.1-ին տող.

«

| | | | | |
|---|---|---|---|---|
| 350.1. | Փոշի ալյուրի | 1 | 0.4 | 4 |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ